


ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Գորիսի պետական համալսարանի
գիտական խորհրդի նիստում

Ռեկտոր _____ Յու. Ա. Սաֆարյան

« 28 » 04 2012 թ.



Ակադեմիական Ազնվության Հայեցակարգ

Ակադեմիական Ազնվության Հայեցակարգ

1. Նախաբան

1.1 Գորիսի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), ելնելով իր ռազմավարական ծրագրից և առաքելությունից, սույն փաստաթղթով ձգտում է ապահովել ակադեմիական գործընթացների ազնիվ և արդարացի կազմակերպումը:

1.2 Համալսարանի ուսանողները և պրոֆեսորա-դասախոսական կազմի անդամները պատասխանատվություն է կրում սույն հայեցակարգի (այսուհետ Հայեցակարգ) պահպանման համար և պարտավոր է հետևել բարոյականության նորմերին և սույն փաստաթղթերում ներկայացված ակադեմիական ազնվության սկզբունքներին:

1.3 Սույն հայեցակարգը կոչված է ապահովելու համապատասխան ակադեմիական ազնվության կանոնների խախտումները արդարացի լուծումը:

2. Հիմնական հասկացություններ

2.1 «Ակադեմիական ազնվություն» նշանակում է

- ակադեմիական աշխատանքները կատարել առանց գրագողության, խաբեության, կեղծիքի, խարդախության, կաշառքի, առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու կամ օգտվելու տեղեկատվության ցանկացած արգելված աղբյուրից:

- դիտավորյալ կերպով կատարել կամ փորձել կատարել կամ օգնել այլ անձին՝ կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության սույն փաստաթղթով սահմանված չափորոշիչներին:

2.2 «Ակադեմիական աշխատանք» նշանակում է ցանկացած գործողություն, որը կատարվել է Համալսարանի կրթական ծրագրերի և դասընթացների հետ կապված: Ակադեմիական աշխատանքը ընդգրկում է ավարտական աշխատանքների թեզերը, քննությունները, ստուգարքները, կուրսային աշխատանքները, հաշվետվությունները, ինքնուրույն, անհատական աշխատանքները, լաբորատոր աշխատանքը և գիտական փորձերը, որոնք կատարվում են Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ծրագրերի շրջանակներում: Այն կարող է լինել գրավոր կամ բանավոր:

2.4 «Ակադեմիական ազնվության դեպքեր» քննող հանձնաժողովը՝ բաղկացած է 5 հոգուց, որի նպատակն է Համալսարանում սույն կարգի գործողության ապահովումը: Հանձնաժողովը սույն փաստաթղթում ներկայացված ընթացակարգով ուսումնասիրում է ազնվության ցանկացած դրսևորում և անում առարկություններ: Հանձնաժողովը կազմված է 2 ուսանողից և 3 դասախոսից:

2.5 «Հանձնաժողովի անդամ»՝ այն ուսանողը և դասախոսը, ով ընտրվում է Ակադեմիական ազնվության դեպքերը քննող հանձնաժողովում: Հանձնաժողովի դասախոս անդամները պետք է տվյալ պահին լինեն Համալսարանի աշխատող, իսկ ուսանող անդամները տվյալ պահին լինեն Համալսարանի ուսանող:

2.6 «Համալսարանի անձնակազմի անդամ»՝ Համալսարանի ուսանողներ, պրոֆեսորա-դասախոսական կազմի ցանկացած անդամ, ով որևէ կերպ առնչվում է

Համալսարանի ակադեմիական գործընթացների հետ կամ ով դասավանդում կամ հսկում է ուսանողների ուսուցումը:

3. Համալսարանի ղեկավարությունը, ուսանողի և դասախոսի իրավունքները ու պարտականությունները

3.1 Համալսարանի ղեկավարությունը ստեղծում է պայմաններ՝ ուղղված ուսումնական գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բարոյահոգեբանական առողջ միջավայրի ստեղծմանը և պահպանմանը, ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի համար հավասար հնարավորությունների ապահովմանը և կրթության որակի բարձրացմանը:

3.2 Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ իր գործունեությունն իրականացնում է սույն հայեցակարգի, Համալսարանի կանոնակարգի և իր աշխատանքային պայմանագրով սահմանված գործառույթներին համապատասխան:

3.3 Համալսարանի յուրաքանչյուր ուսանող իր գործունեությունն իրականացնում է սույն հայեցակարգի, Համալսարանի կանոնակարգի և իր՝ Համալսարանի հետ կնքած պայմանագրի համապատասխան:

3.4 Ուսանողի իրավունքները.

3.4.1 Ուսանողները կարող են իրենց միջոցներով մասնակցել պրակտիկաների նաև Գորիս քաղաքից դուրս գործող հիմնարկ-ձեռնարկություններում՝ նախապես համաձայնեցնելով պրակտիկայի ղեկավարի հետ

3.4.2 Յուրաքանչյուր ուսանող, նախապես գրանցվելով, կարող է ակադեմիական աշխատանք կարատելու նպատակով օգտվել համակարգչային սենյակից:

3.5 Ուսանողի պարտականությունները.

3.5.1. Ուսանողը պարտավոր է կանոնավոր կերպով հաճախել դասերին և իրեն դրսևորել պատշաճ կերպով

3.5.2 Պահպանել առաջադրանքների հանձման և պաշտպանության համար սահմանված օրերը

3.5.3 Լինել հարգալից Համալսարանի աշխատակազմի և այլ ուսանողների հանդեպ

3.5.4 Բարեխղճորեն վերաբերի Համալսարանին պատկանող գույքին

3.5.5 Ակտիվ մասնակցություն ցուցաբերի գործնական աշխատանքներին

3.5.6 Քննությունների ժամանակ չօգտվել ծածկագրերից և այլ միջոցներից:

3.6 Դասախոսի իրավունքները

3.6.1 Դասախոսը իրավունք ունի կազմելու քննական տոմսերը՝ հաշվի առնելով հարցերի բարդությունը:

3.7 Դասախոսի պարտականությունները.

3.7.1 Գնահատման համակարգում առաջնորդվի չափորոշիչային պահանջներով

3.7.2 Առաջնորդվի ուսումնական առարկայի ծրագրային չափորոշիչների պահանջներով

3.7.3 Պարտավոր է անկողմնակալ լինել ուսանողների հանդեպ

3.7.4 Դասախոսը պետք է ուսանողներին տրամադրի գրականության ցանկ, հնարավորության դեպքում ապահովի դրանցով

3.7.5 Կիսամյակի առաջին ամսվա ընթացքում ուսանողներին ներկայացնի հարցաշարը և դասախոսությունների ու ինքնուրույն աշխատանքների (մշակումների) հարաբերակցությունը

3.7.6 Պահպանի թեստային նյութերի գաղտնիության սկզբունքը

3.7.7 Բարձրացնի ինքնակրթության մակարդակը, մշտապես իրազեկ լինի իր ոլորտում գիտության զարգացումներին, պարբերաբար հանդես գա ուսումնական ծրագրերի զարգացման առաջարկներով

3.7.8 Դասախոսը պետք է լինի հարգալից ուսանողների և գործընկերների հանդեպ

3.7.9 Բարեխղճորեն վերաբերի Համալսարանին պակասող գույքին:

4. Ակադեմիական Ազնվության դեպքերը քննող հանձնաժողով

4.1 Հանձնաժողովը բաղկացած է 5 անձից՝ 2 ուսանող, 3 դասախոս:

4.2 Հանձնաժողովի անդամների ընտրության կարգը.

4.2.1 Հանձնաժողովի ուսանող անդամները առաջադրվում և փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվում են դասախոսական և ուսանողական ամբողջ անձակազմի կողմից:

4.2.2 Հանձնաժողովի դասախոս անդամներից մեկին նշանակում է ռեկտորը, իսկ մյուս երկուսը առաջադրվում և փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվում են դասախոսական և ուսանողական ամբողջ անձակազմի կողմից:

4.3 Հանձնաժողովի կազմը թարմացվում է երկու ուսումնական տարին մեկ անգամ:

4.4 Հանձնաժողովի ուսանող թեկնածուն պետք է ունենա բարձր առաջադիմություն, ուսանողների և դասախոսների վստահությանն արժանացած ու լինի հասարակական ակտիվություն դրսևորող:

4.5 Հանձնաժողովի դասախոս թեկնածուն պետք է առանձնաճանա իր մասնագիտական բարձր որակավորմամբ, վայելի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և ուսանողության հարգանքը:

4.6 Հանձնաժողովի նիստերը գումարվում են յուրաքանչյուր դիմումի ստացվելուց հետո՝ առնվազն 3 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան ուսումնական կիսամյակի ընթացքում՝ 2 անգամ:

4.7 Հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի դասախոս անդամներից, իսկ քարտուղարն ընտրվում է ուսանող անդամներից փակ գաղտնի քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնության սկզբունքով:

4.8 Հանձնաժողովը կարող է հրավիրել նաև արտահերթ նիստեր՝ նախագահի նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների կեսից ավելի անդամների նախաձեռնությամբ:

4.9 Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայությամբ՝ քարտուղարը:

4.10 Համալսարանի առաջին ընտրված հանձնաժողովը մշակում և հաստատում է իր աշխատակարգը, որը բխում է սույն փաստաթղթի դրույթներից:

4.11 Հանձնաժողովը իրավասու է քննարկել միայն գրավոր դիմած հարցերը:

4.12 Նիստը համարվում է կայացած, եթե ներկա են հանձնաժողովի անդամներից առնվազն 4-ը:

4.13 Հանձնաժողովի որոշումները համարվում է կայացած, եթե կողմ են քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությունը:

4.14 Հանձնաժողովի որոշումները ներկայացվում են համապատասխան կողմին և Համալսարանի ռեկտորին:

4.15 Հանձնաժողովը իր որոշումները ձևակերպում է որպես առաջարկ ուղղված Ակադեմիայի տնօրենին, որը պարունակում է սույն փաստաթղթի կետերին համապատասխան հիմնավորումներ:

4.16 Հանձնաժողովի որոշումներին ենթակա են բողոքարկման, եթե առկա են հարցին առնչվող նոր փաստեր:

4.17 Հանձնաժողովի որոշումներին Համալսարանի ռեկտորը ընթացք է տալիս 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.18 Հանձնաժողովի անդամը ազատվում է իր պարտականություններից հետևյալ դեպքերում՝

4.18.1 երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայություն

4.18.2 եթե չի մասնակցել մեկ ուսումնական տարվա ընթացքում տեղի ունեցած նիստերի առնվազն 60 տոկոսին:

4.18.3 սույն փաստաթղթի 4.4 և 4.5 կետերում նկարագրված հանձնաժողովի անդամին հատուկ որակներ չդրսևորելու կամ սույն փաստաթղթի ու հանձնաժողովի աշխատակարգի դրույթները չպահպանելու դեպքում

4.18.4 եթե այլևս Համալսարանի դասախոս կամ ուսանող չէ

4.18.5 սեփական նախաձեռնությամբ հրաժարական տալու դեպքում:

4.19 Հանձնաժողովի անդամի թափուր տեղը լրացվում է նույն սկզբունքով, ինչպես նկարագրված է 4.2 կետում:

5. Ակադեմիական անազնվության դեպքերի լուծման ընթացակարգ

5.1 Սույն Հայեցակարգի դրույթները խախտած և խախտումն արձագանքող կողմը կարող է լինել ուսանողը և/կամ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի անդամը:

5.2 Ստորև նկարագրված են ակադեմիական ազնվության խախտումները, որոնցից յուրաքանչյուրի համար նկարագրված է համապատասխան լուծում

5.2.1 Հարցատոմսերի և թեստերի կազմման ընթացակարգի խախտման դեպքում առաջարկել դասախոսին հայտարարել գրավոր նկատողություն՝ նրան գրկելով կուրսում դասավանդելու իրավունքից, իսկ նույն խախտումը նույն անձի կողմից կրկնվելու դեպքում առաջարկել դասախոսին աշխատանքից հեռացնել: Եթե վերոհիշյալ խախտման արդյունքում մեկ կամ մի քանի ուսանողներ արտոնություններ են ստացել՝ առաջարկել նշանակել նոր քննություն այլ տոմսերով:

5.2.2 Կարգապահության նորմերի խախտման դեպքում առաջարկել դասախոսին հայտարարել գրավոր նկատողություն, իսկ ուսանողին պարտավորեցնել տվյալ դասախոսի շաբաթական խորհրդատվությանը ներկայանալ: Կարգապահության նորմերի խախտումներ համարվում են դասի ժամանակ բջջային կապից օգտվելը, դասի ընթացքը դիտավորյալ խանգարելը կամ խոչընդոտելը, անձը վիրավորող գործողություններ կատարելը, պարբերաբար ուշացումները և այլն:

5.2.3 Ակադեմիական գործընթացներում սուբյեկտիվ վերաբերմունք ցուցաբերելու դեպքում՝ առաջարկել դասախոսին ներկայացնել գրավոր նկատողություն, կրկնվելու դեպքում գրկել տվյալ կուրսում դասավանդելու իրավունքից:

5.2.4 Մեկ ուսումնական տարվա ընթացքում 3 գրավոր նկատողության առկայության դեպքում առաջարկել թե ուսանողին և թե դասախոսին հեռացնել Համալսարանից:

5.2.5 Նյութական վերաբերմունքի և կոռուպցիոն այլ ակնարկների կամ դրսևորումների դեպքում առաջարկել թե ուսանողին և թե դասախոսին հեռացնել Համալսարանի (վկաների կամ բավարար փաստերի առկայության դեպքում):

5.2.6 Անհատական և կուրսային աշխատանքների, ռեֆերատների կատարման ժամանակ գրագողության, արգելված աղբյուրներից օգտվելու դեպքում առաջարկել բացի անբավարար գնահատական նշանակելուց ուսանողներին ներկայացնել նաև գրավոր նկատողություն:

5.2.7 Անհատական և կուրսային աշխատանքների, ռեֆերատների կատարման ժամանակ իր պարտականությունների խախտման դեպքում առաջարկել դասախոսին գրկել ղեկավարելու իրավունքից և հայտարարել գրավոր նկատողություն:

5.2.8 Բուհի գույքը վնասելու դեպքում և դասախոսը և ուսանողը փոխհատուցում կամ վերանորոգում են այն սեփական միջոցներով:

6. Հաշվետվություն և մատչելիություն

6.1 Փաստաթուղթը ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատման պահից: Համալսարանի ղեկավարությունն ապահովում է սույն Հայեցակարգի մատչելիությունը յուրաքանչյուր ուսանողի և դասախոսի համար:

6.2 Հանձնաժողովը գործում է թափանցիկ և ուսանողների ու պրոֆեսորա-դասախոսական կազմի առջև հանդես է գալիս տարեկան հաշվետվությամբ ակադեմիական անազնվության դեպքերի և դրանց վերաբերյալ կայացած որոշումների վերաբերյալ:

6.3 Հաշվետվության մեջ տվյալները չպետք է ներկայացվեն անհատական/անվանական/ սկզբունքով այլ ձևով՝ ներկայացնելով խախտման դեպքերի և դրանց տրված լուծումների թիվը, բնույթը: Համալսարանի ղեկավարությունն ապահովում է հաշվետվության հրապարակումը: